

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ  
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Միջին կենսաթոշակների նշանակման կարգի մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-092-28.09.2012-ՍՀ-010/0 և Պ-092՝-28.09.2012-ՍՀ-010/0) վերաբերյալ:

Ներկայացված նախագծերը չեն բխում կենսաթոշակային ապահովության ոլորտում վարվող քաղաքականության տրամաբանությունից: Մասնավորապես, խնդրահարույց է այն հանգամանքը, որ, ներկայացված նախագծերն ընդունվելու դեպքում, պարբերաբար պետք է համամասնորեն բարձրացվեն բոլոր կենսաթոշակների չափերը, ինչը, հաշվի առնելով աշխատանքային, զինվորական և սոցիալական կենսաթոշակների հաշվարկման կարգի առանձնահատկությունները, էլ ավելի կխորացնի կենսաթոշակների չափերի միջև առկա

տարբերությունը:

Միաժամանակ, միջին կենսաթոշակի չափը որպես թիրախային ցուցանիշ սահմանելը և վարվող քաղաքականության հիմքում դնելու գաղափարը, առկա դրամական միջոցների շրջանակներում, ռիսկային կոարձնի Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1487-Ն որոշմամբ հաստատված կենսաթոշակային բարեփոխումների ծրագրով ամրագրված՝ կենսաթոշակատուների շրջանում աղքատությունը և աղքատության ռիսկը նախ՝ նվազագույնի հասցնելու, ապա՝ բացառելու նպատակադրումը: Այս համատեքստում կարևորում ենք նաև միջնաժամկետ հատվածում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի պակասուրդի կրճատման և պարտքի արդյունավետ կառավարման որդեգրած սկզբունքների պահպանումը:

Հարկ ենք համարում նշել նաև, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ «միջին կենսաթոշակ» հասկացությունը սահմանված չէ: Միջին կենսաթոշակի չափը հաշվարկվում է որպես վարվող քաղաքականության արդյունքային ցուցանիշ և արտացոլվում հայեցակարգային փաստաթղթերում: Ըստ այդմ, հստակ չէ, թե ինչ չափ պետք է հիմք ընդունվի կենսաթոշակի մեծությունը սահմանելու համար:

Նախագծերի ընդունման դեպքում անհրաժեշտ է «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարել նաև այլ փոփոխություններ, ինչպես նաև սահմանել «միջին կենսաթոշակ» հասկացությունը:

Նախագծերի փաթեթը չի համապատասխանում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի պահանջներին:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հան-

դես կգա Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը:

Ներկայացված օրենքների նախագծերի ընդունման դեպքում ընդունումից հետո անհրաժեշտություն կառաջանա փոփոխություններ կատարել դրա կատարումն ապահովող Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1734-Ն որոշումներում: Նշված որոշումները կընդունվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 8-ի N 541-Ն որոշմամբ նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետներում:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

«Միջին կենսաթոշակների նշանակման կարգի մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունումը որոշակի դրական ազդեցություն կունենա առողջապահության բնագավառի վրա՝ բնակչության սակավ ապահովված սոցիալական խմբերի կողմից բժշկական ծառայություններից օգտվելու հասանելիության աստիճանի բարձրացման, ինչպես նաև անհրաժեշտ թանկարժեք դեղամիջոցների ձեռքբերման հնարավորության ընձեռման առումով:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Միջին կենսաթոշակների նշանակման կարգի մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ**

Նախագծով առաջարկվել է սկսած 2013 թվականից միջին կենսաթոշակի չափերը ըստ տարիների բարձրացնել միջին աշխատավարձի նկատմամբ համապատասխան տոկոսներով, ինչը մեր հաշվարկներով կբերի պետական բյուջեի ծախսերի ավելացման տարեկան շուրջ 26,0 մլրդ.դրամի չափով, որի համար ՀՀ 2013-2015թթ. ՄԺԾԾ-ով, ինչպես նաև ՀՀ Ազգային Ժողով ներկայացված ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով համապատասխան միջոցներ նախատեսված չեն:

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Միջին կենսաթոշակների նշանակման կարգի մասին» և «Հայաստանի Հանրապետության «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ**

«Միջին կենսաթոշակների նշանակման կարգի մասին» և «Հայաստանի Հանրապետության «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

#### **ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Միջին կենսաթոշակների նշանակման կարգի մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Միջին կենսաթոշակների նշանակման կարգի մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է միջին կենսաթոշակը մինչև 2018թ. և հետագա տարիների համար յուրաքանչյուր նախորդ տարվա միջին աշխատավարձի որոշակի տոկոսի չափով սահմանելուն* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն չի նախատեսվում:

#### **ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Միջին կենսաթոշակների նշանակման կարգի մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Միջին կենսաթոշակների նշանակման կարգի մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագիծ) 2013 թվականի փետրվարից տարեցտարի նախատեսվում է միջին կենսաթոշակի բարձրացում:

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծերի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

### Եզրակացություն

«Միջին կենսաթոշակների նշանակման կարգի մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Միջին կենսաթոշակների նշանակման կարգի մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ նախագծեր)՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծերը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն բացասական ազդեցություն,

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն դրական ազդեցություն:

**ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**  
**<<Միջին կենսաթոշակների նշանակման կարգի մասին>> և <<Պետական կենսաթոշակների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման**

1. <<Միջին կենսաթոշակների նշանակման կարգի մասին>> և <<Պետական կենսաթոշակների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ նախագծեր) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Նախագծերի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

Պ-092-28.09.2012-ՍՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**ՄԻՋԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետությունում 2013 թվականի փետրվարի 1-ից միջին կենսաթոշակը սահմանել 2012 թվականի միջին աշխատավարձի 30 տոկոսի չափով:

**Հոդված 2.** Հայաստանի Հանրապետությունում 2014 թվականի փետրվարի 1-ից միջին կենսաթոշակը սահմանել 2013 թվականի միջին աշխատավարձի 32 տոկոսի չափով:

**Հոդված 3.** Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի փետրվարի 1-ից միջին կենսաթոշակը սահմանել 2014 թվականի միջին աշխատավարձի 34 տոկոսի չափով:

**Հոդված 4.** Հայաստանի Հանրապետությունում 2016 թվականի փետրվարի 1-ից միջին կենսաթոշակը սահմանել 2015 թվականի միջին աշխատավարձի 36 տոկոսի չափով:

**Հոդված 5.** Հայաստանի Հանրապետությունում 2017 թվականի փետրվարի 1-ից միջին կենսաթոշակը սահմանել 2016 թվականի միջին աշխատավարձի 38 տոկոսի չափով:

**Հոդված 6.** Հայաստանի Հանրապետությունում 2018 թվականի եւ հետագա տարիների համար միջին կենսաթոշակը հաշվարկել նախորդ տարվա միջին աշխատավարձի 38 տոկոսի չափով:

**Հոդված 7.** ՀՀ կառավարությանը՝ սույն օրենքով նշված կարգի համաձայն միջին կենսաթոշակի բարձրացման եւ 2012 թվականին ձեռավորված միջին փաստացի կենսաթոշակի հարաբերության գործակցով վերահաշվարկել բոլոր պետական եւ սոցիալական կենսաթոշակները:

**Հոդված 8.** Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2013թ. հունվարի 1-ից:

Պ-092՝-28.09.2012-ՍՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության «Պետական կենսաթոշակների մասին» օրենքը /ՀՕ-243, 30.12.2010թ. / լրացնել հետեւյալ բովանդակությամբ՝ նոր հոդվածով:

**Հոդված 32.1.** Սոցիալական, զինվորական, աշխատանքային կենսաթոշակների վերջնական մեծության հաշվարկման կարգը կատարվում է «Միջին կենսաթոշակների նշանակման կարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

### ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Սույն օրենքի ընդունումը կապված է այն հանգամանքի հետ, որ Հայաստանի Հանրապետությունում 2012 թվականին ձեռավորված միջին կենսաթոշակը կազմում է միջին աշխատավարձի 26 տոկոսը: Սրա հետ կապված, նկատի ունենալով միջին աշխատավարձի ցածր լինելը, կենսաթոշակառուների ավելի քան 85 տոկոսը աղքատներ են: Միջին աշխատավարձ եւ միջին կենսաթոշակ հարաբերությունը աշխարհի երկրների մեծ մասում օրեսդրորեն սահմանված է: Հայաստանի նման երկրի համար, ուր մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն տատանվում է 3-7 հազար դոլարի սահմաններում, իսկ կենսաթոշակային տարիքը գտնվում է 63-65 միջակայքում, 35-40 տոկոս միջին աշխատավարձի նկատմամբ միջին կենսաթոշակ սահմանելը պարտադիր պայման է բնակչության մի հոծ հատվածի աղքատության ճիրաններից դուրս բերելու համար: Մեր հաշվարկներով 2013-2018թթ. յուրաքանչյուր տարի կպահանջվի տարեկան շուրջ 20 մլրդ դրամ լրացուցիչ գումար սույն օրենքի պահանջները կատարելու համար: